


2024

101

1929




Ա. ԽԱՆՁՅԱՆ

(101)

ԴԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԱՃՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

-□-



ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՎՐԵՎԱՆ - 1929

♦ 2001

2010

պարատը կընթանա իր աշխատանիքի ասպարհում բյուրո-  
կրատիկ տարրերից վնուաբար ազատվելու ուղիով: Հենց  
այդ ե ներկայումս մեր կուսակցության՝ վորպես պրոլե-  
տարական դիկտատորայի խսկական դեկավարի՝ կարեվորա-  
գուշ խնդիրներից մեկը:

Այս բոլոր խնդիրների լուծման, բանվոր գասա-  
կարգի աճող ակտիվությանը համապատասխան հուսի-  
մեջ մտնելու, մեր աշխատանքների բոլոր ասպարեզնե-  
րում հստակ դասակարգային-քաղաքական գիծն տպա-  
հովելու գործում վնուական նշանակություն ունի կուսա-  
կական կազմակերպությունների սոցիալական կազմի,  
կցական կազմակերպությունների սոցիալական կազմի,  
կուսակցության կապը բանվորական մասսաների  
հետ սիստեմատիկորեն ամրացնելու, ակտիվիստ բանվոր-  
ների աճող կաղըրեն անընդհատ մեր կուսակցության  
շարքերը գրավելու հարցը:

## 2. Անման հարցի նշանակությունը

Հայկոմկուսի համար

Հայաստանի կոմկուսակցության համար աճման  
և սոցիալիստական կազմի կարգավորման հարցն ունի  
հատուկ բացառիկ կարևոր նշանակություն: Կուսա-  
կցական կազմակերպությունների համեմատաբար յերի-  
տասարդ լինելը Հայաստանում, պրոլետարական  
ողախների, ապա, ուրեմն, մեր ռեզերվների փոքրաթիվ  
լինելը, մասը բուրժուական տարրերի, ծառալրջների  
և գլուղացիության ձգումը դեպի կուսակցություն,—  
այս բոլորը բարդացնում են մեր պայմաններում  
աճման պրոբլեմի լուծումը և պահանջում են բոլոր  
կուսկազմակերպությունների ամենասեռուն

թլունը դեպի աճման հարցը: Սակայն մենք պետք ե-  
մատնանշենք, վոր կուսամարմինների ուշադրությունը դե-  
պի աճման հարցը մինչև ալժմ անբավարար ե յեղել: Հա-  
կոմկուսի Կ.Նոտկոմի Դ պլենումում մենք քննարկեցինք  
այդ հարցը 2<sup>1/2</sup> տարվա դադարից հետո (հարցը վերջին  
անգամ քննարկվել եր 1926 թվի մայիսի 18-ին): Գավ-  
կոմիների նախագահություններն ու պլենումները նույն-  
ուեն վերջին 2 տարվա ընթացքում խիստ սակավագեկա-  
պ են քննության դրել կուս. աճման և նրա սոց. կազմի  
կարգավորման հարցերը: Նույնը պետք ե առել նաև  
կուսակցական պերիֆերիայի մասին. մի ամբողջ շարք  
արտադրական բջիջներ 2 տարվա ընթացքում վոչ սի  
անդամ քննության չեն առել աճման հարցը, ի մի  
են գումարել կատարված ընդունելությունների ար-  
դյունքները և չեն ուրվագծել տվյալ կազմակերպու-  
թյան կոնկրետ անհերքները հետագա աճման ասպա-  
րիզում: Մեր կազմակերպությունների աճման պրակ-  
տիկակում նկատվող թերությունները նշանակալի  
չափով բացատրվում են, ինարկե, այդ հանգամանքով:

## 3. Կուս. հիմնական դիրեկտիվները անման հարցի մասին

Աճման հարցում կուսակցության հիմնական դի-  
րեկտիվ է հանդիսանում Համկոմկուսի XІІІ համագումարի  
վորոշումը՝ արդյունաբերական բանվորների թիվը  
կուսակցության միջ 50%՝ հասցնելու մասին: Հետա-  
գա XІV և X V համագումարները թեև հատկապես կուս-  
շինարարության և աճման հարցերը չեն ծեծել, բայց  
իրենց բանաձևերում մատնանշել են կուսակցության

մեջ բանվորների ներգրավումն ուժեղացնելու, կուսակցության կազմում պրոլետարական միջուկը սխստեմատիկաբար մեծացնելու ժայռ անհրաժեշտությունը՝ Յելենելով այդ դիրքիտիվներից, Համկոմկուսի Կենտկոմը կուսարդահամարի արդյունքների առթիվ կալացրեց հետևյալ վորոշումը.

«Յելենելով կուսակցության ԱԼՈ և ԽՎ համագումարների վորոշումներից՝ արդյունաբերական բանվորների ներգրավումը կուսակցության մեջ ուժեղացնելու մասին և նկատի առնելով բանվորդասակարգի ակտիվության բարձրանալը, կենտկոմը հրավիրում ե բոլոր կուսկազմակերպությունների ուշադրությունն այն բանի վրա, վոր անհրաժեշտ և ուժեղացնել դազգյահի բանվորների ներգրավման աշխատանքները այն հաշվով, վոր շտարված ընթացքում արդյունաբերական բանվորները կազմեն վոչ պակաս քան կուսակցության կազմի կեսը»:

Իր այս տարվա նոյեմբերյան պլենումում հասուլ քննության առնելով կուսակցության աճման խնդիրները՝ Համկոմկուսի կ. Կոմիտեն վորոշեց «այնպես անել, վոր վոչ ուշ քան մինչև 1930 թվականի վերջերը կուսակցության կազմի կեսից վոչ պակասը բաղկացած լինի արտադրության բանվորներից, վորպիսի նպատակով առաջիկ յերկու տարվա ընթացքում կուսակցության մեջ ընդունվողների կազմում 80 տոկոսից վոչ պակասն ապահովել արտադրության բանվորների և մանավանդ՝ արտադրական յերկարատև ստաժ ունեցողների համար, ծավալելով այդ նպատակով բանվորական մասսաների մեջ համապատասխան կազմա-

կերպչական, գործնական և գաղափարական-դաստիարակչական աշխատանք»։ Այս են հիմնական դիրեկտիվները, վորը մենք պետք ե լելակետ ընդունենք՝ աճման հարցում Հայաստանի կոմկուսի կոնկրետ անելիքներն ուրվագելիս, կապակցելով և կոնկրետացնելով այդ համաձայն մեր յերկրի պայմանների և մեր ոեղերների վիճակի:

#### 4. Հայկոմկուսի կազմը յեվ նրա սոցիալական դեմքը

Այժմ անցնենք մեր կազմակերպության կազմի և սոցիալական գեմքի բնութագրմանը։ Առ 1-ն հոկտեմբերի 1928 թ. Հայաստանի կոմկուսակցության մեջ հաշվում և 521 բջիջ և 57 թեկնածուական խմբակ, Այս և Հայաստանի կուսկազմակերպության ցանցը, Յեթի թվերի դիմենք, կտեսնենք, վոր կուսրջների թիվը Հայաստանում տարի տարու վրա ավելանում ե, և այդ աճումն, ընդհանուր առմամբ, նորմալ է։ Այսպես, որինակ՝ 1923 թ. կար 347 բջիջ, 24 թվին՝ 376 բջիջ, 25-ին՝ 377, 26-ին՝ 478 բջիջ և 109 թեկնածուական խմբակ, 27-ին՝ 442 բջ. և 60 թեկն. խմբակ և 28 թվին՝ 521 բջ. և 57 թեկն. խմբակ։ Վերջին 2 տարվա ընթացքում կուսրջների թիվը աճել է 79 միավորով, վոր չի կարելի հաջող չհամարել։ Թեկնածուական խմբակների վորոշ կը ճատումը և վոչ մի անորմալություն չի ներկայացնում և բացարձում ե նրանով, վոր թեկնածուներին կուսանզամ փոխագրելուց հետո թեկնածուական խմբակների փոխարեն նոր կոմրջիջներ են կազմակերպվել։

Հստ սոցիալական հատկանիշի մեր բջիջները

ներկայացնում են հետեւյալ պատկերն առ 1-ն հունվարի 1928 թվի.

1. Գյուղացիական բջիջ . . . . .	331
2. Հիմնարկային » . . . . .	82
3. Տրանսպորտային » . . . . .	38
4. Արտադրական » . . . . .	31
5. Ռազմական » . . . . .	24

Մեր բջիջների ցանցն ինչ չափով և ընդգրկում յերկիրն ու տնտեսական միավորները: Հայաստանում կան ընդգամենը 35 արտադրական միավոր՝ 20 հոգուց վոչ պակաս բանվոր ունեցող այդ միավորներում ունենք 31 բջիջ, ասել ե թե այդ միավորներն ընդգրկել ված են կուսկազմակերպության կողմից 89%՝ Կա 1117 գյուղական միավոր, ուր մենք ունենք 331 բջիջ, ասել ե թե գյուղերի 28 տոկ., ունի կուսրջիջ՝ մի թիվ վոր նորմայ և և փոքր չի կարելի համարել, ինչ չափով վոր կուսակցության աճումը գյուղի գծով պետք է համաձայնեցնել բանվորական կորիզը կուսակցության մեջ ուժեղացնելու խնդիրների հետ:

Կուսակցության անդամների և թեկնածուների թիվը առ 1-ն հոկտ. 1928 թվի հավասար է 9,747 հոգու, վորից 6,175 հոգի կուսանդամ և 3,572 հոգի թեկնածու: Սկսած 23 թվից, այսինքն 5 տարվա ընթացքում կուսկազմակերպությունն աճել է 4,841 հոգով, այսինքն համարյա 100 տոկոսով: Թեկնածուների թիվը կուսակցության ընդհանուր կազմի մեջ աստիճանաբար նվազում է, որինակ՝ 23 թվին կուսկազմակերպության մեջ թեկնածուները կազմում են 59,8 տոկ., 24 թվին՝ 55 տոկ., 25 թվին՝ 53 տոկ., 26 թվին՝ 48 տոկ., 27 թվին՝ 43 տոկ. և ընթացիկ 28 թվին՝ 36,6 տոկ.,

վորն, այնուամենայնիվ չի կարելի շատ մեծ չհամարել: Հայաստանի կոմկուսակցության սոցիալական կազմը բնորոշվում է հետեւյալ տվյալներով (նրա զարգացման դինամիկան ցույց տալու համար վերցնենք վերջին 3 տարվա տվյալները):

1. Առ 1-ն հունվ. 27 թ. 8,418 հոգի, վորից բանվորներ՝ 21,8 տոկ., գյուղացիներ՝ 58,4 տոկ., ծառայողներ և այլք՝ 19,8 տոկ.:

2. Առ 1-ն հունվ. 28 թ.՝ 8,679 հ., վորից բանվ.՝ 29,7 տոկ., գյուղ.՝ 48,2 տոկ., ծառայողներ և այլք՝ 22,1 տոկ.:

3. Առ 1-ն հոկտ. 28 թ.՝ 9,747 հ., վորից բանվ.՝ 40,4 տոկ., գյուղացի՝ 40,3 տոկ., ծառայող և այլք՝ 19,8 տոկ.:

Ինչպես աևսում ենք, ամենադրական յերկույթն այստեղ այն ե, վոր բանվորական կորիջը Հայաստանի կուսկազմակերպության մեջ անշեղորեն աճում և սկսած 1927 թվից: Մինչ այդ ընդունելության մեջ գերակշռող տեղը բռնում ելին գյուղացիները, վորի վրա իր ժամանակ հատուկ ուշադրություն դարձրեց Համամկուսի կենտրոմը: Այսպես, որինակ՝ այն ժամանակ, յերբ Համակոմիկուսի մեջ (ամբողջությամբ առած) գյուղացիների ընդունելությունը 25 թվին կազմում էր 15,6 տոկ., Հայաստանում այդ տոկոսը հասնում էր 61,6-ի:

Բայց կազմակերպության կազմի սոցիալական դրությանը վերաբերող տվյալներից բացի, կազմակերպության սոցիալական դեմքի չափազանց կարեսը ցուցանիշ են հանդիսանում կոմմունիստների կազմի դրականութիւն վերաբերող տվյալները:

Առ 1-ն հոկտ. 1928 թվի մենք ունենք—

Արտադրական բանվոր	2,648 հ. — 27,2 տոկ.
Բատրակ	191 » — 2 »
Գյուղացի	3,445 » — 35,3 »
Ծառայող	3,035 » — 31,1 »
Այլք	428 » — 4,4 »

Ի՞նչ պատկեր է ներկայացնում աճման դինամիկան ըստ գրաղմունքների տեսակի:

Առ 1-ն հունվ. 1927 թվի գազգուհի բանվորները կազմում եին 19,6 տոկ., առ 1-ն հունվ. 1928 թվի՝ 19,1 տոկ., տոկուսն իշխել եւ Սակայն ընթացիկ տարվա 9 ամսվա ընթացքում մենք ունենք նկատելի թոփչք դեպի փեր—կուսկազմակերպության 27,2 տոկ. ներկայումս կազմում են դաշտահի բանվորները:

Կուսկազմակերպությունն ըստ ազգությունների հետեւ պատկերն է ներկայացնում:

Առ 1-ն հունվարի 1927 թ. Առ 1-ն ոգոստ. 1928 թ.

Հայեր	91 տոկոս.	90,5 տոկոս.
Թուրքիր	4,3 »	4,7 »
Ռուսներ	3,3 »	2,9 »
Հույներ	0,8 »	0,9 »
Քրդեր	0,1 »	0,2 »
Այլք	0,5 »	0,8 »

Առկա յե ազգային փոքրամասնությունների տոկոսի վորոշ չափազանց դանդաղ աճումը կուսակցության կազմի մեջ, վորը մենք պետք է հաշվի առնենք ընդունելության առաջիկա կամպանիալի խնդիրներն ուրվագծելիս:

Եարունակում ե թուլլ մնալ ընդունելության աշխատանքը նաև բանվորուհիների ու բատրակուհիների շրջանում. կանանց տոկոսը կուսկազմակերպության մեջ հավասար ե 4,8-ի: Այստեղ տոկայ յե կանանց տոկոսի անընդհատ նվազումը սկսած 27 թվից առ 1-ն հոկտ. 27 թվի կանայք կազմակերպության մեջ կազմում ելին 5,2 տոկ., առ 1-ն հունվ. 28 թվի՝ 5 տոկ., առ 1-ն հոկտ. 28 թվի՝ 4,8 տոկոս:

Ըստ սոցիալական կազմի կանայք կուսակցության մեջ բաժանվում են հետեւյալ կերպ:

Առ 1-ն հոկտ. 27 թ.	Առ 1-ն հոկտ. 28 թ.
Բանվորուհիներ	60 հ.—14 տոկ.
Գեղջկուհիներ	134 հ.—31,4 »
Ծառայողներ	191 հ.—44,7 »
Այլք	42 հ.—9,9 »

Այսպիսով վերջին տարվա ընթացքում առկա յե բանվորական կորիզի ուժեղացումը կոմմունիստուհիների մեջ, մինչդեռ բանվորուհիները բավարար չափով չեն ներգրավվել կուսակցության մեջ:

Կոմիերիտականների թիվը կուսակցության մեջ առ 1-ն հուլիսի 28 թ. հավասար ե 2036-ի կամ կուսակցության կազմի 21,7<sup>0/0</sup>-ի: Կուսակցական կորիզը ԼԿՅԵՄ մեջ կազմում ե կոմիերիտության կազմի 8,8<sup>0/0</sup>-ը (26 թ. 7,4<sup>0/0</sup> եր, 27-ին՝ 8,2<sup>0/0</sup>): Յեթե նկատի ունենանք այն հանգամանքը, վոր գերչափահանները ԼԿՅԵՄ մեջ կազմում են 18 6<sup>0/0</sup>, կոմսոմոլի կուսակցությունը պար ե փոքր (անբավարար) համարել:

Այժմ, յերբ Հայաստանի կուսկազմակերպության դեմքը բավական պարզ ե, անհրաժեշտ է ավելի մասնամասնաբար կանգ առնել վերջին ժամանակների

27 թվից, 189 հոգի՝ 26 թվից, 196 հոգի՝ 1925 թվից,  
64 հոգի՝ 24 թվից և ալին.

Յեթի ծառալողների կամ գյուղացիների փոխա-  
դրության ուշացնելը կապված է մի շարք հայտնի  
պատճառների հետ, բանվորներին տարիներում թեկ-  
նածու պահելը վկայում է, վոր կուսակցուկան-դաս-  
տիարակչական աշխատանքը նրանց շրջանում թույլ  
է լիդեր ուստի անհրաժեշտ և մոտալուտ ժամանակ-  
ներում լուրջ ուշադրություն դարձնել այդ հարցի  
վրա:

### 5. Անման հերթական խնդիրները

Վերոհիշյալ տվյալները բնորոշում են Հայաստա-  
նի կոմկուսակցության կազմի և ճման ու կարգավոր-  
ման ասպարիզում յեղած նվաճումներն ու թերություն-  
ները: Այդ տվյալներից յելնելով, մենք պետք են լա-  
րենք ու բնենունք մեր բոլոր կուսակցակերպություն-  
ների և առաջին հերթին կուսակցության բջիջների  
ուշադրությունն այդ հարցերի վրա, համարելով այդ  
մեր կուսակցական շինարարության կարերագույն  
խնդիրներ:

Համակուսակցական դիրքեկտիվների (13-րդ, 14-րդ  
15-րդ համագումարների բանաձեկը, Համակոմկուսի  
կենտկոմի 1927 թ. հոկտ. 13-ի և նոյեմբերյան պլե-  
նումի վորոշումն) հիման վրա մենք պետք են անմիշ-  
ապես դիմենք առաջիկա տարվա ներդրավման աշ-  
խատանքի կոնկրետ պլանը մշակելու գործին: Յեթի  
մինչև 1930 թվականը կուսակցության կազմում ար-  
տադրական բանվորների տոկոսը 50-ի հասցնելու դի-  
րքեկտիվը անիրազործելի յե մեր պայմաններում, ապա

գոյություն ունեն բավական հնարավորություններ՝  
աստիճանաբար մոտենալու այդ դրությանը մոտալուտ  
տարիների ընթացքում: Անման ու կարգավորման խընդ-  
րում մեր անելիքն առաջիկա շրջանում պետք են ինի՝  
ուժեղացնել բանվորների ներգրավումը կուսակցության  
մեջ, մասնավորապես անկուսակցական բանվորական  
ակտիվի ներգրավումը, նույնակալի չափով ուժեղացնել  
բարեկեների բնդունելուրյունը, դանդաղեցնել զբուգացի-  
ների բնդունելուրյան բափր, ընդ վորում բնդունել բա-  
ցառապես չխլոր զյուղացիներին յեվ չխալորներից ու  
միջակեներից բաղկացած զյուղացիական ակտիվը (զյուղ-  
խորհուրդը կոռպերացիա, չխալորական խմբակներ, ԿԳԵՄ  
յեվ այլն), ծայրակեզ նվազագույնի հասցնել ծառայոդ-  
ների բնդունելուրյունը, այն ել բնդունելով զյուղապես  
մեզ հարազատ զյուղական յեվ տեխնիկական ինսել-  
լիգենցիալից: Հարցի նման գրույթն անմիջականորեն  
բղիքում և Համակոմկուսի նորեմբերյան պլենումի վորո-  
շումներից, վորտեղ նշված են:

«Առաջիկա յերկու տարվա ընթացքում՝ ա-  
ռավելագույն չափով սահմանափակել վոչքան-  
վորական տարրերի ընգունելությունը: Բնդ  
սմին ծառալողներն իրենց հանձնարարական  
տվողների թվում անպայման պետք են ունենան  
առնվազն միքանի արտադրության բանվորներ  
(զյուղերում՝ բատրակների և գյուղատնտեսական  
բանվորների):»

Այնպես անել, վոր ըստ հնարավորության  
շուտով և մշտական կերպով տեղաշարժություն  
կատարվի դիմումունական հասական բանվորների  
և բատրակների ընդունությունը կուսակցու-



թյան մեջ, ալլ և՝ լավագույն ակտիվիստների, չքավորների և կոլանտեսականների։ Ընդ սմին անհրաժեշտ է գլուղական կազմակերպությունների արմատական և շուտափուլթ բարելավումը, դուռը և կազմի նորոգումը։

Առաջիկա ներգրավման աշխատանքներում մենք հատուկ ուշադրություն պետք են դարձնենք նաև բանվորութիւնների և ազգային փոքրամասնությունների աշխատավորության ներգրավման վրա։

Յենելով այս դրություններից՝ Կիևակոմի 5-րդ պլենումն արդեն ուրվագծորեն տվել են Հայաստանի կոմկուսակցության աճման «ստուգիչ թվերը» 1929 թվականի համար։ Դրանց հիման վրա ներգրավման աշխատանքի կոնկրետ ծրագրեր կազմելիս տեղական կուսկազմակերպություններն ամեն կերպ պետք են խուսափեն կազմակերպության աճման ու կարգավորման հարցերին ձեական-մեքենայական մոտեցում ցուց տալուց։ Գավառային կոմիտեներն իրենց վրա պետք են վերցնեն ավելի մեծ պատասխանատվություն ստորին քջիջների կողմից կազմվող ներգրավման ծրագրերի համար, ապահովելով այդ աշխատանքի սիստեմատիկ դեկավարությունը։

#### 6. Անհրաժեշտ է զեել կուսարբերը անհարազա սարելով

Կազմակերպության աճման վերաբերյալ մեր առջև դրված խնդիրներն անկարելի կիրնի իրականացնել առաջին հերթին առանց մեր ոեզերթերի ճշգրիտ քառական և զորակական հաշվառման։ Ուժեղացնելով նախնական կուսաստիարակչական աշխատանքն ան-

կուսակցական բանվորների մեջ, ուժեղացնելով անհատական և խմբակային ագիտացիան նրանց մեջ, ներդրավելով նրանց կուսպարոցները և դոնբաց կուսակցական ժողովները՝ մենք այդպիսով աշխատանքի «կամպանիական» ձեերից պետք են անցնենք բանվորներին և բատրակներին կուսակցության մեջ ներգրավելու սիստեմատիկ, ամենորյա աշխատանքի։

Սոցիալական կազմի կարգավորումը միաժամանակ պահանջում ե կուսմարմիններից ուժեղացնել իրենց ուշադրությունը դեպի կուսչարքերը խորթ, անհարազատ և բյուրոկրատացած տարրերից զտելու հարցը, հատկապես—դեպի կոմմունիստ գյուղացիների տնաեւությունների զարգացման պրոցեսը։ Կուսակցական պլանակայիշի պակասություններն այս ասպարիգում արդեն ունեցել են իրենց հետեանքը. շատ գյուղական կուսրջիջներ արդեն խճողվել են անտեսապես ուռնացած, յերբեմն ել նույնիսկ կուլակացած տարրերով, ինչպես նաև հիմնարկությունների բջիջները վորոշ քայլայված, խորթացած հլիմեններով։ Այսպես, որինակ՝ Անդրյերկոմի կատարած հետազոտությունը Դիլիջանի գավառում մատնանշում ե, վոր «կազմակերպության սոցիալական կազմի կարգավորման աշխատանքը թուլլ ե յեղել վորի հետեանքով կազմակերպությունը վորոշ չափով խճողվել ե ունեոր-կուլակային տարրերով, և անհատ կոմմունիստներ կուլակ են դարձել»։

Նոր-Բայազետի վերաբերմամբ Կենտկոմն արձանագրում ե «գավառային կազմակերպության սոցիալական կազմի անբավարար լինելը, մըջակների գերակոսությունը, մինչեւ թույլ ե բատրակ-չքավորական

Կորիկը, քաղաքի կազմակերպության մեջ ծառայող ների ու միջակների գերտկշությունը և կուլակացած տարրերի նկատելի տոկոսի գույությունը։ Նույն և նկատված նաև Եջմիածնի գավառում, Վորոնցովկայի գավառամասում և այլն։ Այս ամենը պահանջում է բոլոր կուսակցական կազմակերպություններից ուղևուն ուշադրություն դեպի աճման և կոմմունիստ գյուղացիների տնտեսությունների ընդարձակման պրոցեսների հարցը։

Յենելով Անդրյանի կոմի վերջին վորոշումներից՝ գյուղում կատարվող աշխատանքների մասին՝ անհրաժեշտ և ուժեղացնել կոմմունիստների ներգրավումը՝ կոլեկտիվ տնտեսությունների մեջ, կուսակցական պարտականության և կարգապահության խախտում համարելով պասսիվ վերաբերունքը դեպի կոլտնտեսությունների շինարարությունը։

Միաժամանակ կուս դեկավար որդանները և ամբողջ կուսակցակերպությունը պիտի սրբն իրենց ուշադրությունը և ուժեղացնեն գործնական աշխատանքները՝ սիստեմատիկորեն մաքրելու համար կուսաշրերը անհարազատ, խորթ, քայլայված և բյուրոկրատացած, կուլակացած և ուռացած «կուսանդամներից», դեկավարվելով Համկոմկուսի Կե-ի նոյեմբերյան պլենումի ցուցմունքով այն մասին, վոր

«... կուսակցական կազմակերպությունների ստուգումը և գոտումն ոտար, քայլայված, բյուրոկրատացած և այլ տարրերեց պետք և կատարվի շատ ափելի վճռական և առավել սիստեմատիկ կորպորացի կվէ-ի և տեղալին վերահսկիչ հանձնաժողովների ամենայեռանգուն և ուժեղացված դեկավարությունը այդ գործի վերաբերմամբ։»

Ներգրավման աշխատանքի ուժեղացումը վոչ մի դեպքում չպետք ե ունենա այնպիսի հետեանք, վոր կուսակցության շարքերը խճողվեն քաղաքականապես կրագորական կամ անհարազատ տարրերով։ Ներհոսման ուժեղացումը պետք ե լնթանա ձեռնարկներում, տրանսպորտում մեր մասսայական աշխատանքի ընդհանուր ուժեղացման գծով (պրոֆմիությունների, գործարտեղկոմների, պատգամավորական ժողովների, ԼԿՅԾ, հասարակական կամավոր կազմակերպությունների, բանթղթակցալին խմբակների աշխատանքի ուժեղացում)։

Հայաստանի կուսակցակերպության նվաճումները սոցիալական կազմի աճման և կարգավորման ասպարիզում վերջին շրջանում անվիճելի լին։ Ուժեղացնելով կուսակցիների աշխատանքը համաձայն կենտկոմի 5-րդ պլենումի վերջին վորոշումների՝ մենք կկարողանաք հասնել ավելի մեծ արդյունքների, կկարողանաք ավելի սերտ միությամբ համախմբել բանվորների և աշխատավորների ամենալայն զանդանները սոցիալիստական շինարարության հերթական լոգունգների շուրջը։

## ՀԱՎԵԼՎԱԾ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՇՈՒՄԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ

ՀԿ(Բ.)Կ Կենտկոմի 5-րդ պլենումի վորոշումը

1.

Կենտկոմի պլենումը, քննելով վերջին տարիների ընթացքում կուսակցության սոցիալական կազմի աճման և կանոնավորման արդյունքները, մատնանը-

շում և Հայաստանի կոմկուսակցության մի շարք Նըլվաճումներն արդ ասպարիզում, վորոնք գլխավորաբար ձեռք են բերված ընթացիկ տարում: Մեր կուսակցության հիմնական նվաճումներն արդ ասպարիզում հետևելն են:

ա) Կուսաբջիջների քանակական աճումը. առ ս. թ. հոկտեմբերի 1-ը մենք ունենք 521—1927 թ. 442-ի դիմաց:

բ) Դեպի կուսակցությունը տեղի ունեցող հոսանքի և աճման տեմպի ուժեղացումն անցրալ տարվա համեմատությամբ. ս. թ. 9 ամսում կուսակցության մեջ ընդունված են 1,163 հոգի—1927 թ. 463 հոսությամաց:

գ) Վերջին տարում ընդունվածների մեջ գերազակող մեծամասնությունը բանվորներ են՝ ընդունվածների ընդհանուր կազմի 75,6 տոկոսը— անցած տարվա 37,3 տոկոսի հանդեպ:

դ) Վորոշ չափով ուժեղացել և բատրակների ընդունելությունը կուսակցության մեջ. ս. թ. 10 ամսում ընդունված եր 133 բատրակ—1927 թ. 22 հոգու հանդեպ:

ե) Աճման ավելի ուշադիր կանոնավորման հետևանքով ակներև և կուսակցության սոցիալական կազմի նկատելի չափով քարելավումը. անցած տարվա 29,7 տոկոսի հանդեպ սոցիալական դրությամբ բանվորները կուսակցության մեջ կազմում են արդեն 40,4 տոկոս. Իրենց զրադառնքով բանվորները կազմում են կուսակցության 27,2 տոկոսը— անցյալ տարվա 19,1 տոկոսի հանդեպ:

զ) Անցյալի համեմատությամբ աճել և նաև բատ-

րակների տոկոսը կուսակցության մեջ. այժմ 2 տոկոս ե 1926 թ. 0,6 տոկոսի հանդեպ:

## 2.

Միաժամանակ կինտկոմի պլենումն անհրաժեշտ ե համարում մատնանշել նաև մի շարք եյական թերություններ կուսակցական կազմակերպությունների աշխատանքների մեջ կուսակցության աճման և սոցիալական կազմի կանոնավորման խնդրում:

ա) Մեր պահեստի ուժի (անկուսակցական բանվորական ակտիվ, գյուղի հետ կապված բանվորներ, հին և նոր վորակյալ և չվորակավորված բանվորներ) քանակական և վորակյալն հաշվառման բացակայությունը կուսաբջիջներում և կուսակցական մարմիններում:

բ) Կամպանիաների մեթոդի գերակշռության անդամագրության աշխատանքների մեջ, փոխանակ սիստեմատիկ աշխատանքների՝ բանվորների անբեղմնաց հոսանքը գեպի կուսակցություն ապահովելու համար:

գ) Բատրակների թուլլ ներգրավումը կուսակցության շարքերը:

դ) Ազգային փոքրամասնությունների աշխատավորության (բատրակներ, բանվորներ) թուլլ հոսանքը գեպի կուսակցություն:

ե) Թեկնածուներին կուսանդամ փոխադրելու անբավար տեմպը, թեկնածուական ստաժը լրացրած բանվոր թեկնածուների նկատելի քանակության գոյությունը կազմակերպության մեջ:

զ) Կանանց (բանվորուհիներին և բատրակուհիներին) կուսակցության մեջ ընդունելու տեմպը յետ և մնում աճման ընդհանուր տեմպից: Վերջին տարում

կանանց տեսակարար կշռի կրծատումը կուսակցութեան մեջ,

է) Ծառալողների տոկոսը կուսակցության մեջ դեռևս բարձր ե, և չնայած դրան, տեղերում հաճախ ծառալողներ են ընդունվում առանց բավարար ընտրության և ստուգման:

Ը) Թույլ ե դրված քաղդաստիարակչական աշխատանքը թե անկուսակցական բանվորական ակտիվի և թե կուսակցական յերիտասարդ մասսաների շըրջանում:

Թ) Կուսորգանների անբավարար ուշադրություն կոմմունիստ գյուղացիների տնտեսության զարգացման պրոցեսուներին ե, դրա հետեւանքով, գյուղական բջիջների խճողումը տնտեսապես ուղղացած և նույնիսկ կուլակացած տարրերով:

Ժ) Աճման և սոցիալական կազմի կանոնավորացան վերաբերյալ կուսդիրեկտիվների անբավարար քննումը կուսաբջիջների ժողովներում կուսակցության գավկոմների տալիք կոնկրետ դիրեկտիվների բացակայությունն առանձին բջիջներում:

3.

Յելնելով Հայաստանի Կոմկուսակցության աճման և կազմի կանոնավորման վերոհիշյալ նվաճումներից, կենտկոմի պլենումն անհրաժեշտ և համարում բոլոր կուսակցմակերպությունների, առաջին հերթին կուսաբջիջների ուշադրությունը սևեռել դրանց, վորպես մեր կուսակցական շինարարության կարելորպույն խնդիրների ուղղությունը մատնանում է, վոր սոցիալիստական շինարարության ծավալման յեվ դասակարգային հակասությունների սրման բարդացած պայ-

մանեներում մեր յերկրում, բանվոր դասակարգին սոցիալիստական շինարարության խնդիրների ուղղության մեջ աժմատանիքներու, մեր կուսակցության դեկանակարգային-բաղստական հստակ գիծն ապահովելու նիմնական հախապայմաններից մեկը հանդիսանում է բանվորների ուժեղ ներգրավումը կուսակցության մեջ յեվ կուսակցության սոցիալական կազմի ավելի խիստ կանոնավորումը:

Այդ խնդրի վերաբերյալ կուսակցական ընդհանուր գիրեկաթիվների հիման վրա (XII, XIV, XV կուսամագումարների բանաձևերը, Համկոմկուսի կենտկոմի 1927 թ. հոկտ. 13-ի վորոշումը), — Հայաստանի կուսակցմակերպություններն անմիջապես պետք ե գիմեն առաջիկա տարվա համար անդամագրության աշխատանքի կոնկրետ պլաններ կազմելուն: Յեթե 1930 թվականին կուսակցության կազմի մեջ արտադրության բանվորների տոկոսը 50-ի հասցնելու գիրեկաթիվը Հայաստանի պայմաններում հնարավոր չել լիովին կիրարկել, ապա կան բավականաչափ հնարավորություններ՝ մոտակա տարիներին աստիճանաբար այդ դրությանը մոտենալու համար: Աճումը կարգավորելու խնդիրն ե՝ ուժեղացնել բանվորների և, առաջին հերթին, անկուսակցական բանվորական ակտիվի և վորակալ բանվորների անդամագրությունը կուսակցության մեջ, ուժեղացնել բատրակների անդամագրությունը, դանդաղեցնել գյուղացիների անդամագրության տեմպը, ընդունելով բացառապես գյուղական գրության մեջ պայմաններից առաջանայած առաջարկության և չքավորներից ու միջակներից կազմակերպած գյուղացական ակտիվից (գյուղխորհուրդ, կոոպե-

բացիս, չքավորական խմբակներ, ԿՅԵՄիություն) ծալը նվազագույնի հասցնել ծառայողների անդամագրությունը, ընդունելով, գլխավորապես, մեզ մոտիկ, զյուղական ինտելիգենցիալի շարքերից (գյուղական ագրոնոմ, ուսուցիչներ, վարպետներ, տեխնիկներ և այլն): Առանձնապես վճռական բեկում պետք է առաջացնել կուսակցության մեջ բանվորունիներին և գեղջկունիներին ընդունելու գործում, նկատի առնելով կուսակցության անման տեմպի ծալքաստիճանը յետ մնալըն ի հաշիվ այդ կատեկորիաների:

Նկատի առնելով Հայաստանի ԿՅԵՄ կազմի մեջ մեծ քանակությամբ տարիքն անցրածների գոյությունը և միության մեջ դեռևս անբավարար կուսմիջուկը, կենտկոմի ընդգծում և Կոմիերիտմիության անդամներին կուսակցության մեջ ընդունելու հետագա ուժեղացման ծալը անհրաժեշտությունը և, առաջին հերթին՝ բանվոր և բատրակ այն յերիտասարդությունից, փորը ԿՅԵՄ շարքերում հասարակական քաղաքական աշխատանքի լուրջ դպրոց և անցիլ:

Ցեղնելով այս հիմնական խնդիրներից՝ կենտկոմի պլենումը հնարավոր և համարում 1929 թվի համար հետևելալ «ստուգիչ թվերի» սահմանումը. — բանվորների անդամագրությունը 1000 մարդու սահմաններում, բատրակներինը՝ 500 մարդու, գյուղացիներինը՝ 400-ից վոչ ավելի և ծառայողներինը — վոչ ավելի 100 մարդուց:

Այս մոտավոր տվյալների հիման վրա, անդամագրության աշխատանքի կոնկրետ պլանները կազմելիս, կուսակցությունը պետք է ըստ ամենատաք խուսափեն կաղմակերպության անման կարգավորման խնդիրնե-

րին ձևական-մեխանիկական մոտեցում ցույց տալուց և պիտի ավելի մեծ պատասխանատվություն ստանձնեն՝ ստորադաս բջիջների կողմից անդամագրության աշխատանքի պլանները կազմելու համար, ապահովելով այդ աշխատանքի սիստեմատիկ դեկավագությունը յեզ բոլոր միջոցներով բանվորական յեզ կուսակցական հասարակայնության ուսագրությունը գրավելով գեպի անդամագրության աշխատանքի ուժեղացումը յեզ գեպի կուսակցության աւելիքի սիստեմատիկ զբությը գագափարապես յեզ սոցիֆլապես խոր, բայց այլպահ տարերից:

## 4.

Կուսակցության աճման վերաբերյալ բոլոր վերահիշյալ խնդիրները լուծելու համար կենտկոմի պլենումն առհրաժեշտ և հստարում. —

ա) Ցեղնելով նշանակված «ստուգիչ թվերի» կատարման անհրաժեշտությունից, հիմք ունենալով ռեզերվերի քանակային և փորակային ձիշտ հաշվառումը — բոլոր գավկոմները մեկ ամսվա ընթացքում իրենց գավառների անդամագրություն կոնկրետ պլաններ կազմեն մինչև 1929 թվականի վերջը: Կազմված պլանի հիման վրա անդամագրության աշխատանքի և ռեզերվների հետ դաստիարակչական աշխատանք կատարելու մասին տալ կոնկրետ դիրքեկտիվներ և ցուցմունքներ առանձին-առանձին բոլոր արտադրական և փոխադրական բջիջներին և բոլոր գավկոմներին:

բ) Անդամագրության աշխատանքի «կամպանիական» ձևերի փոխարեն առողջա և սիստեմատիկ աշխատանք սահմանել բանվորներին կուսակցության մեջ գրավելու համար՝ անհատական և խմբական ագիտա-

ցիան ուժեղացնելու, անկուսակցական բանվորներին գպրոցները, խմբակները, կուսակցական բաց ժողովները ներգրավելու միջոցով և ալլու:

գ) Ինչպես զավկուսկազմակերպությունների, այնպես ել կոմիտեի տմիության և Հողանտառմիության բանվորների գծով ուժեղացնել կուսակցական և քաղաքական մասսայական աշխատանքը բատրակների մեջ: Բոլոր գավառներում մեկ ամսվա ընթացքում հետազոտել կուլտուր-կրթական աշխատանքի կազմակերպությունը բատրակների մեջ և, մասնավորապես, անզրագիտության լիկվիդացիայի գործը, այլ և ուրվագծել կոնկրետ միջոցներ այդ աշխատանքն ուժեղացնելու համար: Կիրառել բատրակների խմբերին կամ առանձին-առանձին բատրակներին գյուղական առանձին պատրաստված կոմմունիստներին կցելու պրակտիկան՝ նրանց քաղաքական դաստիարակման և անդամագրական ագիտացիայի համար:

դ) Ուժեղացնել շրջկոմիների և գավկոմների ուշադրությունը գեղագիտության կոմմունիստների տնտեսությունների զարգացման պրոցեսները: Անդրյակոմի վերջին դիրեկտիվների հիման վրա՝ առավել լեռանդուն միջոցներ ձեռք առնել գյուղացի-կոմմունիստներին կուտասական շինարարության մեջ ներգրավելու համար: Անհրաժեշտ համարել դրա հետ միասին հանձնարերու բոլոր գավկոմներին, վոր նրանք՝ սիստեմատիկ աշխատանքի կարգով՝ վերանայեն և ազատեն քջիներն ինչպես վերջնականապես քայլքայլած և կուլտակացած գյուղացի-կոմմունիստներից, այնպես ել սոցիալապես և գաղաքարապես խորթ, քայլքայլած կարգերիսական տարրերից:


հ) Մոտակա ամիսներին կոնկրետ միջոցներ ձեռք տանել՝ թեկնածությունից կուսակցության անդամների շարքերը փոխադրելու համար թեկնածուական ժամանակն անցած ստուժ ունեցող բանվորներին և բատրակներին:

զ) Հանձնաբարեկ բոլոր գավկոմներին պարզելու և ուսումնասիրելու կամավոր կերպով և մեխանիկորեն կուսաշարքերից հեռանալու պատճառները, վերանայելու կուսակցության անդամների և թեկնածուների կուսրեան վածությունը և ներգրավելու համար բոլոր թեկնածուներին զեպի կուսպարոցները:

է) Նկատի ունենալով բանվորուհիների և բատրակուհիների չափազանց թույլ հոսանքը զեպի կուսակցությունը, ուժեղացնել անդամագրության աշխատանքը բանվորուհիների և բատրակուհիների շարքերում, առաջին հերթին՝ պատգամավորական ժողովներն ավարտողների թվից:

ը) Նկատի առնելով կուսակցության անհնարինությունը ազգային փոքրամասնությունների աշխատավորներով, անհրաժեշտ համարել անդամագրության աշխատանքի ուժեղացումը նրանց մեջ և կազմակերպել միշարք թեկնածուական խմբեր ազգային փոքրամասնությանց սպանուներում:

թ) Անդամագրության աշխատանքի ուժեղացումը վնաս մի գեղքում չպիտի խճողի կուսակցության շարքերը քաղաքականապես պասսիվ կամ խորթ տարրերով: Դեպի կուսակցություն յեկող հոսանքի ուժեղացումը պետք է կատարվի մեր մասսայական աշխատանքի ուժեղացման գծով և ենունարկություններում և տրամադրություն (արհմարմինների, գործարտեղկոմների,





ԳԻՒՆ Ե 8 Կ.

2013



